### *4.2.2. Ներքին զբոսաշրջիկությունը 2001թ. հունվար-դեկտեմբերին*[1]

Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների, 2001թ. հունվար-դեկտեմբերին հանրապետության տարածքում տեղաբաշխված կոլեկտիվ և անհատական զբոսաշրջիկների տեղավորման միջոցներում (կացարաններում) տեղավորվել են 117079 զբոսաշրջիկներ (ՀՀ ռեզիդենտներ): Ներքին զբոսաշրջիկների 38.6%-ի այցելության նպատակը եղել է գործնական, 21.8%-ինը՝ հանգիստ և ժամանց, 3.0%-ինը՝ բուժում, իսկ 36.6%-ինը՝ այլ (սպորտային, մշակութային, կրոնական և այլն):

**Ներքին զբոսաշրջիկությունն ըստ նպատակի, 2001թ.**

*(մարդ)*

| | I եռամսյակ | II եռամսյակ | III եռամսյակ | IV եռամսյակ | 2001թ., ընդամենը | Տեսակարար կշիռը |
|---|---|---|---|---|---|---|
| **Ընդամենը զբոսաշրջիկներ** [1] | **18067** | **40653** | **46694** | **11665** | **117079** | **100.0** |
| նրանցից՝ ըստ նպատակի | | | | | | |
| գործնական | 8953 | 16557 | 15552 | 4119 | 45181 | 38.6 |
| հանգիստ և ժամանց | 925 | 7923 | 10514 | 6154 | 25516 | 21.8 |
| բուժում | 0 | 44 | 3221 | 226 | 3491 | 3.0 |
| այլ | 8189 | 16129 | 17407 | 1166 | 42891 | 36.6 |

*[1] Ներքին զբոսաշրջիկներ են նրանք, ովքեր ճանապարհորդում են իրենց իսկ երկրի (հիմնական բնակության վայրի) սահմաններում: Հարկ է նշել, որ նման հաշվառում հանրապետությունում կատարվում է առաջին անգամ, ուստի, կապված ընտրանքային դաշտի լիարժեք ներկայացուցչականության, հաշվային օբյեկտների կողմից մեթոդաբանության ոչ բավարար ըմբռնման հետ, հնարավոր է, որ որոշ ցուցանիշներ անհրաժեշտ արժանահավատություն չունենան և դրանք հետագայում ենթարկվեն ճշգրտման: Այդ առումով, ՀՀ ԱՎԾ-ն հայցում է սպառողների ներողամտությունը:*